ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2024/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» դեկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ

Հրաչ Բաբախանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության ավագ մասնագետ

հանձնաժողովի անդամ՝

Արտակ Օհանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տնտեսվար

Բացակա՝

Լիլիթ Մանուկյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2024/06» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (19.12.2023թ.) ժամը 10:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 20.12.2023թ., ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ նաև Օրենք/ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	բենզին, ռեգուլյար	1 049 400

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	Ք. Երևան, Էրեբունի 12/4

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2024/06» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	841500	20 %	1009800	841500	20 %	1009800

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 20.12.2023թ. և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.

«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները Հավելված 1-ը և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.3-ը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.3) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,***

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

Նախագահ՝

_____ Հրաչ Բաբախանյան

Անդամներ՝

_____ Արտակ Օհանյան

Քարտուղար՝

_____ Օֆելյա Ասատրյան